Խ. Ս. Հ. Մ-ի ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

ՀՐԱՀԱՆԳ

1937 Թ. ՇԱՓԱՐԻ ՀԱԿՆԴԵՂԻ ԲԵՐՔԸ ՀԱՆԵԼՈՒ, ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՅԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Թարգմանություն ռուսերենից)

ՀՐԱՏԱՐԱԿ· ԳՐՈՒՉՍԱԽԿՈՄԲԻՆԱՏԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ

ԷՋԵՐԻՆԱԿԱՆ

1937 Թ.

ԳԼԱՎԼԻՏԻ ԼԻԱԶՈՐ № 1172
ՊԱՏՎԵՐ № 2216
ՏԻՐԱԺ 1000

ՏԵՂԱՐԴԻ ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՆԿ
Խ. Ս. Հ. Մ.-ի
ՍՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԺՈՂԿՈՄ Ա. ՄԻԿՈՅԱՆ
633.63:631.55
ԽՍՀՄ ի Հողժողկոմ Մ. ՉԵՐՆՈՎ
ՄՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.
A 1/3756

ՀՐԱՀԱՆԳ

1937 Թ. ՇԱԲԱՐԻ ՀԱԿՆԴԵՂԻ ԲԵՐՔԸ ՀԱՆԵԼՈՒ, ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՅԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խ. Ս. Հ. Մ.-ի Հողժողկոմն ու Սննդարդյունաբերության ժողկոմը կոլտնտեսություններին, շտաբի գործառուններին, ՄՏԿ-ներին յեվ Շրջհողբաժիններին առաջարկում են շտաբի նակնդեղը հանելու, տեղափոխելու յեվ շտաբի գործառունների մթերման կայաններում բնդունելու ժամանակ զեկավարվել են [illegible] հիշյալ ցուցմունքներով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ №

I. ՃԱԿՆԴԵՂՆ ՀԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1) Շաքարի գործարանների դիրեկտորները ՄՏԿ-ի դիրեկտորների հետ միասին ճակնդեղը հողից հանելն ոչնչելուց առաջ կոլտնտեսություններին կցում են ճակնդեղի մթերման կայաններին և հատկացն 1937թ. ճակնդեղի բերքը հանելու և տեղափոխելու մասին «Ա.Ս.Հ.Մ.»-ի — Ժ.Կ.Ա.-ի 1937 թ. հուլիսի 20-ի վորոշման 7-րդ կետի, կոլտնտեսությունների նախագահների հետ վորոշում են մթերակայանների և ճակնդեղի դաշտերի մեջ ընկած հեռավորությունները, կոլտնտեսություններին ճակնդեղը փոխադրելու լրացուցիչ վճարի չափը վորոշելու համար և ներկայացնում են ի հաստատություն շրջանային գործադիր կոմիտեներին։ Շրջգործկոմի հաստատած յուրաքանչյուր կոլտնտեսության հեռավորությունը պարտադիր է կոլտնտեսության, շաքարի գործարանի և ՄՏԿ-ի համար կոլտնտեսությունների բերած ճակնդեղի լրացուցիչ վճարի հաշվարկումները կատարելու և ՄՏԿ-ների միջոցից ճակնդեղը տեղափոխելու մեքենաների փոխադրավարձը վճարելու ժամանակ։

2) Երկհոդբաժնի վարիչը ՄՏԿ-ի և շաքարի գործարանի գյուղատնտեսների և համապատասխան կոլտնտեսության նախագահի հետ միասին պարտավոր են սույն թվի սեպտեմբերի 1-ից վոչ ուշ վորոշել տվյալ կոլտնտեսության ճակնդեղը հողից հանելու և տեղափոխելու վերջնական ուրացույցային պլանը (գրաֆիկան) համաձայն ԽՍՀՄ-ի ԺԿԽ-ի ս. թ. հուլիսի 20-ի վորոշման սահմանված ժամկետների, խակ գործարաններին կցված, սեպտեմբերի 10-ից վաղ բերքահավաքն սկսող կոլտնտեսությունների համար-համաձայն գործարանները գործի դնելու ԽՍՀՄ-ի Սննդամթերքաբերության Ժողկոմի սահմանած ժամկետների։

Կոլտնտեսության նախագահը, շրջգործկոմի հաստատած ուրացույցային պլանի համաձայն սահմանում և յուրաքանչյուր բրիգադի ճակնդեղն հանելու և տեղափոխելու աշխատանքային պլանը, հաշվի առնելով առանձին դաշտերի ճակնդեղի հասունությունը ճակնդեղն հանելու և տեղափոխելու հերթականությունը վորոշելու տեսանկյունով։ Կոլտնտեսության հաստատած ճակնդեղը հա

նելու և տեղափոխելու աշխատանքային պլանը վերաձևակել բրիգադաներում և ողակներում և բացատրել կոլտնտեսականներին, կոլտնտեսությանը պարզև հավելում տալու, ողակի անդամներին ճակնդեղն հանձնելու պլանը գերակատարելու համար պարգևատրելու թյանչափը և կարգը, ինչպես նաև ճակնդեղը հանձնելու համար լրացուցիչ վոխադրավարձ ստանալու կարգի մասին։

3) Առաջարկել կոլտնտեսությունների նախագահներին նախազգուշացնել բոլոր բրիգադիրներին և ողակավարներին այն մասին, վոր ճակնդեղի արմատները իրենց ստոլբիրյաններում պետք է հանվեն առանձին և մթերման կայանին հանձնեն թփերով։

4) Ճակնդեղը հողից հանելիս հետևել վորպեսզի այդպիսին կատարվի խնամքով, թույլ չտալ վոր արմատները վնասվեն, ճակնդեղահանով բարձրացրած ճակնդեղը հողից հանել ճակնդեղահանի հետևից և դարսել կույտ անել թփերը դեպի դուրս։ Ճակնդեղահանի չբարձրացրած քաց թողած արմատները հանել ձեռքի բրիչներով։

5) Արմատները հողից մաքրել թափա-

հարելով և փայտե դանակով կամ մետաղի դանակի բութ կողմով։ Արգելվում է աբսամը՝ հողից մաքրել դանակի սուր բերանով արմատներն իրար խփելով, ինչպես նաև ճակնդեղը կտրելու և մաքրելու համար մանդաղ գործածելը։ Հանած ամբողջ ճակնդեղը մաքրել նույն որը թուփ կտրող գործիքով դանակներով բացառապես կոնաձև։ Պոչերը ու կողքի շյուղերը կտրել մեկ սանտիմետր հաստությամբ։ Խոնավ փչակները մաքրել մինչև սպիտակ մարմնին հասնելը (չոր փչակները թողնել առանց մաքրելու)։

6) Ճակնդեղը մաքրելու ժամանակ տեսակավորել յեբկու կարգի. յուրաքանչյուր կարգը դասել առանձին կույտերով։

ա. Մի կույտի մեջ դասել բոլոր առողջ, չվնասված, 100 դրամից ավելի քաշ ունեցող, ինչպես նաև չոր փչակներով արմատները։

բ. Յերկրորդ կույտի մեջ դասել մինչև սպիտակ մարմինը մաքրած խոնավ բաց փչակներով, հանելու և մաքրելու ժամանակ վնասված պոչերը կոտրված, մկների կրծոտած, թռուցած, ինչպես նաև 100 դրամից պակաս քաշ ունեցող ճակնդեղի արմատնե-

ը։ Ճակնդեղի այս կույտի վրա պետք հատուկ նշան և տեղափոխել մթերման կայաններն առողջ ճակնդեղներից առանձին։

7) Ճակնդեղը հողից հանելու, տեղափոխելու և մաքրելու ժամանակ արգելվում է մի ողակի ճակնդեղը խառնել ուրիշ ողակի ճակնդեղին։ Ճակնդեղահանի հետևից հողից ճակնդեղը ժամանակին հանելու և մաքրելու համար բանվորական ուժը անբավարար լինելու դեպքում բրիգադիրն ու կոլտնտեսության նախագահը պարտավոր են ոգնություն կազմակերպել այդ ողակին, ինչպես այլ աշխատանքներով զբաղվող կոլտնտեսականների։

8) Կոլտնտեսությունների նախագահները պարտավոր են յուրաքանչյուր ողակին տալ չափամաններ, վորպեսզի բոլոր ողակները ել կարողանան հաշվել իրենց դաշտերի ճակնդեղի բերքը։

9) Մաքրած ճակնդեղը մինչև չափամանները չափելը պետք է անպայման ծածկել մաքերով կամ կոպիտ քաթաններով։ Չափելուց հետո ճակնդեղը դարսել կանոնավոր կոնաձև կույտերով և ծածկել։ Կույտերի

բարձրությունը լինելու յե առնվազը 80-90 սանտիմետր։ Կուլտերը դարսելու տեղերը նախապես պետք է հարթել ու մաքրել մոլախոտերից, թփերից։ Կուլտերը տեղավորել ուղիղ գծով ու պուպահեռ շարքերով.

10) Կուլտերում դարսած ճակնդեղն արևի տաքացնելուց և թոշնելուց, իսկ ավելի ուշ ցրտերից պաշտպանելու համար պետք է տնմիջապես ծածկել։ Վոչ մի դեպքում թույլ չտալ կուլտերն առանց ծածկելու թողնել։ Դաշտի կուլտերը, ճակնդեղն հանելու առաջին շրջանում ծածկում են հավացած խոնավ հողով։ Երբ հողի յերեսի շերտը շատ է տաքացել ու չորացել, ինչպես նաև յեթե փոշիացել է—կուլտերը ծածկում են հեռեվյալ կերպով. հողի յերեսի շերտը ժամանակավորապես մի կողմ են գցում և կուլտը ծածկում են ներքևի, ավելի քիչ տաքացած և ավելի խոնավ հողի շերտով։ Իսկ մի կողմ գցած հողը լցնում են ծածկած առաջին հողի շերտի վրա. վորպեսզի այդ շփում չունենա արմատների հետ։ Կուլտի գագաթին բաց թողնել առանց ծածկելու 15 սանտիմետր տրամագծով ողանցք։ Այս ողանցքը

ծածկել միայն թփերով։ Ծածկի հողի շերտի հաստությունը լինելու է առնվազն 10—15 սանտիմետր։

11) Աշնան ցրտերն սկսվելուց առաջ ճակնդեղը թեթևակի ցրտահար լինելուց խուսափելու համար կույտերը ծածկել թփերով. ու հողով. նախ ամբողջ կույտը ծածկել 3—4սանտիմետր հաստությամբ թփերի շերտով և վերևից էլ ծածկել 10—15 սանտիմետր հաստությամբ հողի շերտով։ Ողանցքը ծածկել թփերով և դրան 4—5 սանտիմետր հաստությամբ հողի շերտով։

Վրացական ԽՍՀ-ի, Կիրգիզական, Ղազախական ԽՍՀ-ի, Ազով-Սևծովյան յերկրամասի ճակնդեղացան շրջաններում ճակնդեղի կույտերը բոլոր դեպքերում ծածկում են միայն հողով։

12) Ցերկոսպորիայի դեմ պայքարելու նպատակով անասունների կերի և սիլոսացման համար անպետք բոլոր թփերն անպայման պետք է հավաքել ու թաղել հողի մեջ առնվազն կես մետր խորությամբ։

2. ՃԱԿՆԴԵՂԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. Կոլտնտեսություններին նախագահները պետք է ստուգեն և սեպտեմբերի 1-ին ավարտեն դաշտային ճանապարհների նորոգումն, իսկ շաքարի գործարանների դիրեկտորները պետք է ստուգեն և նույն ժամկետին ավարտեն դեպի գործարան տանող ճանապարհների նորոգումն և սալահատակումը, նաև վթերման կայաններում դեպի կշեռքները և շաքարի գործարաններում ճակնդեղի ժամի փոսերը տանող ճանապարհները։

14) Կոլտնտեսություններն ու ՄՏԿ-ները պարտավոր են ճակնդեղը վթերման կայանները տեղափոխել խստիվ հաստատված կոլտնտեսությունների համար շրջգործկոմների կողմից հաստատած ուրացուցային պլանի հետ։

15) Ճակնդեղը տեղափոխելու համար յուրաքանչյուր բրիգադայում առանձնացնել տեղափոխողների ժշտական խումբ, վորոնց կցել վորոշ ողակներին։ Տեղափոխողները

պարտավոր են տեղափոխել իրենց կցած ողակի հողատարածքի ճակնդեղը, չխառնելով մի ողակի ճակնդեղը մի ուրիշ ողակի ճակնդեղի հետ։ Դաշտավարական բրիգադների բրիգադիրների և տեղափոխողների վրա դնել ճակնդեղն անվնաս պահելու և յուրաքանչյուր ողակի առանձին ճակնդեղի ճիշտ հաշիվները տանելու պատասխանատվությունը։

16) Բունկերների ու ավտոմեքենաների վրա ճակնդեղը բեռնելու և դրանց վրայից շաքարի գործարանների կայաններում բեռնաթափելու համար կոլտնտեսության վարչությունը տալիս է մշտական կոլտնտեսականներ, որոնցից մի մասը մնում է ճակնդեղի դաշտերում, իսկ մյուս մասը՝ ճակնդեղի մթերման կայաններում։ Ճակնդեղն ավտոմեքենաներով կրելու դեպքում արգելել շոֆերներին ավտոմեքենայի վրա, մթերման կայանում ճակնդեղը բեռնաթափելու համար կոլտնտեսականներ վերցնելը։ Ավտոմեքենաների վրա կարող է լինել միայն մի կոլտնտեսական-կոլտնտեսության վարչության կողմից ճակնդեղն հանձնելու լիազորը։

17) Կույտերը բաց անել միայն ճակընդեղը սայլերի կամ ավտոմեքենաների վրա բեռնելուց առաջ։ Մեքենաների վրա բունկերների ոգնությամբ բեռնելու ժամանակ վերջինների մեջ լցնել մեքենաների մեջ բեռնելուց 3—4 ժամից վոչ վաղ։

Ճակնդեղով լցված բունկերներն անպայման ծածկել կոպիտ քաթանով կամ մաթերով, վորպեսզի ճակնդեղը չթոշնի։

18) Ճակնդեղը սայլերի և ավտոմեքենաների վրա բեռնելու ժամանակ արգելել սըրածայր յեղաններից ոգտվելը, գործածել միայն բութ ծայր ունեցող ճակնդեղի յեղաններ, ըստ վորում ճակնդեղը վիրավորելուց խուսափելու համար թույլ չտալ, վոր յեղանով խփեն ճակնդեղին։

19) Ճակնդեղը բեռնասայլերով տեղափոխելու ժամանակ, ճանապարհին արմատները թափելուց խուսափելու համար սայլերի վրա դնել .ամուր արկղներ կամ հյուսված զամբյուղներ, իսկ վորպեսզի ձիերը չկրծոտեն արմատները, սայլերի հետևին դնել բարձր վահաններ։

20) Ճակնդեղը բունկերների ժոտ և սը-

թերման կայանները տեղափոխելու ժամանակ, ինչպես սայլերը, նույնպես եւ ավտոմեքենաները ծածկել կոպիտ քաթաններով պարկերով կամ մաթերով։ Արգելվում է ճակնդեղը ծածկել թփերով ու ծղնտով.

21) 6-րդ կետի «ա» հոդվածով ցույց տրված կուլտուրաներում դարսած ճակնդեղը տեղափոխում են անպայման առանձին նույն հրահանգի 6-րդ. կետի «բ» հոդվածի մեջ հիշված առանձնացրած ճակնդեղից։ Սայլապանին և շոֆերին իրավունք է տրվում չնդունել բեռնելու համար այն ճակնդեղը, որը չի տեսակավորվել սույն հրահանգի 6-րդ կետի համաձայն, կամ յեթե տեսակավորված է, բայց բրիգադիրի կամ ողակի կողմից առանջարկվում են բեռնել խառնած դը բուֆյատը։

3. ՃԱԿՆԴԵՂԻ ԸՆԴՈՒՆԵԼԸ

22) Այն դեպքում յերբ կոլտնտեսությունը ճակնդեղի մթերման կայան բերել է վոչ կոնդիցիոն ճակնդեղ խոշորի հետ մանր (մին չեվ 100 գրամանոց), առողջի հետ վիրավորված, չմաքրած խոնավ փչակներով, պոչերն անկանոն կտրատած, թփերն անկանոն մաք-

ված, առողջի հետ թոռոված, 2 տոկոսից ավել հողի խառնուրդի դեպքում շաքարի գործարանը չի ընդունում ճակնդեղը, կոլտնտեսությանը տեղ և տրամադրում ճակնդեղը մաքրելու և տեսակավորելու համար, իսկ կոլտնտեսությունը պարտավոր է հատուցման կոնտրակտացիոն պայմանագրի 11-րդ կետի, ճակնդեղը սիթերման կայանը հասցնելու որը տեսակավորել ճակնդեղն այնպես, ինչպես ցույց է տրված սույն հրահանգի 6-րդ կետում։

Շաքարի գործարանը պարտավոր է ընդունել վերատեսակավորված և կոնդիցիոն դրության բերված ճակնդեղը։ Յեթե յերկու օրվա ընթացքում կոլտնտեսությունը բերած ճակնդեղը չի դարձնում կոնդիցիոն, շաքարի գործարանը ինքն է իր ուժերով տեսակավորում և բերում կոնդիցիոն դրության ի հաշիվ կոլտնտեսության։

23) Ճակնդեղի սիթերման կայանին առողջ ճակնդեղի փոխարեն քիչ ցրտահար կամ նեխված, ցրտահար յեղած ու հալված ճակնդեղ տալու դեպքում, կոլտնտեսությունը պարտավոր է այդպիսի ճակնդեղները տեսակա-

վոթել իր մեջքներով, վոթի համար ցրտահար ճակնդեղներն առանձնացնել առողջներից, կարատել նեխված մասը մինչև սպիտակ մարմնին հասնելը, տեսակավորել ու բաժանել առողջներն արատավորներից և առանձին հանձնել գործարանին, իսկ գործարանը պարտավոր է ընդունել այդ մաքրելուց և տեսակավորելուց հետո։

Զոհված ցրտահար ու նեխված, ցրտահար ու հալված ճակնդեղները ընդունելիս ստացականի վրա նշել «խառան»։ Շաքարի գործարանի կողմից դիրեկտորներին և ՄՏԿ-ի գյուղատնտեսներին, ճակնդեղի կոլտնտեսությունների նախագահներին և բրիգադիրներին անհատական պարգևատրման չափը վերջելու ժամանակ «խառան» նիշով ընդունված ճակնդեղը հաշվի մեջ չեն առնվում։

24) ՄՏԿ-ի գյուղատնտեսները պարտավոր են հրահանգել կոլտնտեսականներին ճակնդեղը հողից հանելուց առաջ և հանելու ժամանակ ճակնդեղը մաքրելու և տեսակավորելու կարգի մասին։

Բայի այդ, կոլտնտեսությունների նախագահները, բրիգադիրները և ՄՏԿ-ի գյու

ղ ատնտեսները ճակնդեղի հանձման առաջին որերը պետք է անձամբ նեբկա գտնվեն մբթերման կայաններում, վորպեսզի տեղում ստուգեն ճակնդեղի տեղափոխման և ընդունելու կազմակերպման ճշտությունը և դրանով սովորեցնեն կոլտնտեսականներին ճակնդեղի մաքրելը, տեսակավորելը բեռնելն ու գործարան տեղափոխելը։

25) Գործարաններից մինչև 25 կիլոմետր հեռավորության վրա գտնվող դաշտերից ճակնդեղը ավտոմեքենայով տեղափոխելու դեպքում ՄՏԿ-ն և կոլտնտեսությունները պարտավոր են առանց մթերման կայան տանելու հանձնել ուղղակի շաքարի գործարանին։

26) Շաքարի գործարանները և յերկաթուղային խոշոր կետերին կից բոլոր մթերման կայաններում, որտեղ ընդունում են 300 հազար ցենտներից վոչ պակաս ճակնդեղ, շաքարի գործարանների դիրեկտորները պարտավոր են կազմակերպել թեյարաններ, ճակնդեղ բերող սայլապաններին ու շոֆերներին քաղցր թեյ բաց թողնելու համար։

27) Շաքարի ճակնդեղը հափշտակումներից ու կորուստներից պաշտպանելու համար կոլտնտեսականների նախաձեռնները պարտավոր են՝

ա. Կազմակերպել ճակնդեղի դաշտերի ամբողջորյա 24 ժամյա պահակություն և նախազգուշացնել ամեն մի սեփականատի իր անձնական պատասխանատվությամբ մթերման կայանը տարած ճակնդեղի ամբողջականության համար։

բ. Թույլ չտալ անասուններին ճակնդեղի դաշտերում արածելը մինչև ճակնդեղի տեղափոխման ավարտելը և ճակնդեղը հողից հանելն ավարտելուց հետո կոլտնտեսության նախագահի կողմից դաշտի ընդունելը։

28) Ճակնդեղից աղատված, հողատաներն ողակներից բրիգադիրը պետք է ընդունեն ամեն որ։ Ճակնդեղի հողից հանելն ու տեղափոխելն ավարտելուց հետո կոլտնտեսությունների նախագահները պետք և վերջնական ստուգում կատարեն արտադրները հողից հանելու և կույտերից ու բունկերներից հավաքելու խնամքով ու ճիշտ կատարած լինելը։

Եթե ստուգման ժամանակ գտնեն, որ դաշտում մնացել են չհանված կամ չհավաքած ճակնդեղի արտադրներ, ողակը պարտավոր է կրկին անգամ քշել, ու հանել և միայն յերկրորդ անգամ ստուգելուց և դաշտում չհանված ու չհավաքած արտադրներ չլինելու դեպքում միայն ընդունել դաշտը։

ՀՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038360

[034]
451
A I/3756
Пров. 1940 г.
Пров